

# Մայր Խայրենիքում



## «ԲԱՐԵՊԱՇՏ ԵՎ ՀԱՆՃԱՐԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

1974 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 3-ը Սովետական Միությունում էր գտնվում իրավաբանության բնագավառի աշխատողներից բաղկացած ֆրանսիացի գրոսաշրջիկների մի մեծ պատվիրակություն: Պատվիրակությունն իր սույն ճանապարհորդությամբ, որը կազմակերպվել էր Իրավաբանության դոկտորների ֆրանսիական ազգային ընկերակցության նախաձեռնությամբ և որը վերոհիշյալ ընկերակցության կազմակերպած երրորդ ճանապարհորդությունն էր դեպի Սովետական Միություն վերջին տասը տարիների ընթացքում, նպատակ էր ունեցել այս անգամ այցելելու երեք հանրապետություններ՝ Հայաստան, Վրաստան և Ուկրաինա:

Ընկերակցության գլխավոր քարտուղար, իրավաբան Միշել Լուսիսը Փարիզում հրատարակվող «Իրավաբանություն և տնտեսագիտություն» հանդեսի 1975 թվականի 15-րդ համարում լույս տեսած շահեկան մի հոդվածում գրի է առել իր տպավորությունները վերոհիշյալ ճանապարհորդության մասին: Անդրադառնալով մասնավորաբար պատվիրակության Հայաստան կատարած ուղևորությանը, հոդվածագիրը «Բարեպաշտ և հանճարեղ Հայաստանը» վերնագրի տակ նշում է. «Մեր խումբը, նախկին ճանապարհորդություններից իր պահած բազում տպավորություններով և տարբեր երկրներում հաստատված բարեկամական հազար ու մի կապերի հիշողություններով լեցուն, ժամանեց Երևան՝ նոր գեղեցկություններ, նոր բարեկամներ հայտնաբերելու ակնկալությամբ: Հայաստանը, իր հնագույն մշակույ-

թով, իր հարուստ պատմական անցյալով, մեզ ներկայանում էր որպես կախարդական մի երկիր, որ այժմ տեղագին կերտում է իր ապագան: Հիրավի, Մատենադարանի ձեռագիր գանձերից և Էրեբունու ավերակներից սկսած մինչև Սարդարապատի հուշարձանը՝ խորհրդանիշը երկրի անկախության և 1918 թվականին թուրքերի դեմ տարված հաղթանակի, գունագեղ պատկերների մի ամբողջ շարան էր, որ անխառն հիացումով էր լցնում ամեն ինչի նկատմամբ անհազ հետաքրքրություն ցուցաբերող ճանապարհորդներին սրտերը»:

Հոդվածագիրն այնուհետև, սերմ տողերի մեջ բնութագրելով Հայաստանի կրոնական պատմական հուշարձանները որպես գերազանց արվեստի անզուգական նմուշներ, ավելացնում է. «Գեղարդա վանքը մնում է անմոռանալի. բարեպաշտ ու հանճարեղ ամբողջ Հայաստանն է ամփոփված 12-րդ դարի այդ վիմափոր հիասքանչ կերտվածքի մեջ, որի քարերը տաշված են կուռքերն անարգող նորադարձ առաջին քրիստոնյաների ժայռակոտ հավատով տոգորված վանականների կողմից ... Ապա զարմանահրաշ Գառնիկ՝ իր վերականգնված հեթանոսական տաճարով, որը կառուցված է հունական դասական արվեստի հավերժական գեղեցկության նկատմամբ զգացված անդիմադրելի սիրով»:

Հոդվածագիրը, ս. Հոփսիսիմե, ս. Գալսեան վանքերի և Զվարթնոցի ավերակների մասին իր խոհերն ու տպավորություններն արձանագրելուց հետո, ոգևորությամբ է հիշատակում պատվիրակության այցը Մայր

Այժող ս. Էջմիածին՝ ճշելով. «Հայաստանում մեր այցելած տեսարժան վայրերի բարձրակետը հանդիսացավ Էջմիածինը, ուր Նորին Սրբույնության Վազգեն Ա Հայոց Հայրապետը մեզ ընդունեց Իր պալատում մեծ ջերմությամբ ու սիրով: Փոխանակում սրբտագին խոսքերի, հուշանվերների, անթերի հյուրընկալություն, եղբայրական անկեղծ միջնորդություն,—ամեն ինչ հիշարժան էր դարձնում սույն ընդունելությունը: Ընդունելությունից հետո պատվիրակությունը Մայր տաճարում ներկա գտնվեց պատարագի սրբազան արարողությանը, որի ընթացքում մեզ մատուցվեց մի տեսակ բաղաբջ—հաց՝ զարմանալի պարզությունից այն մարդկանց, որ քիչ ունեն, բայց իրենց ամբողջ ունեցածը բաժանում են քեզ հետ: Հուզիչ էր մանավանդ տաճարում Վազգեն Ա Հայոց կաթողիկոսի՝ Ֆրանսիայից ժամանած պատվիրակության անդամներին ուղղված ողջույնի արտառույչ խոսքը՝ որպես վկայություն Էկումենիզմի և հավերժական Հայաստանի»:

Հանդեսի նույն համարում Ֆրանսիայի գերագույն վճռաբեկ առյուծի գլխավոր դատապաշտպան և դատական գործերի գծով կառավարության խորհրդական Անդրե Տուրանը, որը գլխավորում էր պատվիրակությանը, «Ընդունելություն Հայոց կաթողիկոսի մոտ» վերնագիրը կրող իր հոդվածում շարադրել է իր տպավորությունները պատվիրակության Մայր Աթոռ այցելության մասին, ուր ջերմությամբ նկարագրում է մասնավորապես պատվիրակության անդամների հանդիպումը Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

«Մեր ձեռքի տակ եղած «Նածեյ» ուղեցույց-գրքույկից մենք բոլորս գիտեինք,—իր հոդվածն սկսում է Անդրե Տուրանը,—որ երևանից ոչ հեռու գտնվում է Էջմիածին անունով մի փոքրիկ քաղաք, որը ճանաչված է որպես «Լուսավորչական հայերի Վատիկան»: Իրավաբանության և տնտեսագիտության միջազգային ակումբի կողմից մեզ բաժանված մեր ուղևորության ծրագրից գիտեինք նաև, որ մի ընդունելություն է նախատեսված Մայրազույն Պատրիարք-կաթողիկոսի՝ Հայոց Պապի մոտ: Սակայն հաստատ չէր, թե այդ ընդունելությունն արդյոք տեղի պիտի ունենա՞ր: 83 հոգուց բաղկացած մեր խմբի անդամներից ոմանք կարծում էին, թե պատվիրակության միջից մի քանիսը միայն կընդունվեն կաթողիկոսի կողմից: Բայց, ի մեծ գոհունակություն բոլորի, ընդունելություն շնորհվեց պատվիրակության լրիվ կազմին, հոկտեմբերի 27-ին, կիրակի օրը, պատարագից սուաջ:

Որովչա՞ծ ժամին Էջմիածնում մի երիտասարդ սարկավազ մեզ առաջնորդեց լուսա-

վոր և ճաշակով կահավորված մի սրահ, ուր մի քանի բուսե անց երևաց կաթողիկոսը՝ սև ու սպիտակ եկեղեցական զգեստով, գլխին մի մեծ սև կնգուղ՝ հայկական վեղարը, որով կուսակրոն հոգևորականը գատորը, որով ամուսնացած քահանայից: Դա որշվում է ամուսնացած քահանայից: Դա Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետն էր, որի դեմքը, ալեխառն մորուքով, արտահայտում էր հանդարտ վեհություն, խոհականություն և բարություն:

Որպես պատվիրակության ղեկավար ինձ վիճակվեց խմբի անունից խոսք ասել և կաթողիկոսին ներկայացնել այն տղամարդկանց և կանանց, որոնց նա բարեհաճել էր ընդունել: Ապա, շնորհակալություն հայտնելով Հայոց կաթողիկոսին՝ հազարվեց հարյուրամյա մի եկեղեցու Պետին, այն ընդունելության համար, որ շնորհվել էր մեզ, իմ ելույթի վերջում մեր ընկերակցության անունից Նրան նվիրեցի իրավաբանության դոկտորների ստաբեռանջանը կրող արծաթյա մի մեդալ...

Այնուհետև Հայոց Հայրապետը, իմ խընքանքով մեր ընկերակցության ուկեմատյանի մեջ Իր ստորագրությունը դնելուց հետո, դանդաղ, մեղմ ձայնով, բայց ֆրանսերեն լեզվով մի սքանչելի ճառ արտասանեց: Իր ելույթի մեջ Նա բարի գալուստ մաղթեց մեզ ի ս. Էջմիածին և արտահայտեց Իր այն համոզումը, որ իրավունքի միջոցով հավասարակշռության ու արդարության որոնումը խաղաղության առաջնորդող լավագույն ճանապարհն է մարդկանց համար, ապա Իր օրհնությունները բաշխեց մեզ և պատրաստվեց պատասխանելու մեր հարցերին:

Նրա պատասխաններից մենք իմացանք, որ հայ եկեղեցին ունի մեծ թվով հավատացյալներ թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում, հատկապես Ֆրանսիայում, որ հայ եկեղեցին անկեղծորեն Էկումենիկ եկեղեցի է, և որ Հիսուսի աստվածային և մարդկային բնության վերաբերյալ քրիստոսաբանական հարցերը, որոնք մի ժամանակ այնքան հուզել էին Արևելքի քրիստոնեական եկեղեցիները, նրա համար այլևս այժմեական հետաքրքրություն չեն ներկայացնում:

Ապա հոդվածագիրը սեղմ տողերով արձանագրում է իր հիշողությունները Մայր տաճարում տեղի ունեցած պատարագի սրբազան արարողության մասին՝ ճշելով. «Ընդունելությունից հետո կիրակնօրյա պատարագը տղամարդկանց, կանանց և երեխաների անհավատալի մի բազմություն համախմբեց Էջմիածնի հրաշալի տաճարում և նրա շրջակայքում: Տաճարի պատերը զարդարող որմնանկարները, հոգևորականների սև, սպիտակ և ուկեմատուկ զգեստները, երածշուությունն ու սրբազան երգե-

ցողությունը, առատորեն սփռվող խնկի բույաները,— այս բոլորը կրոնական սույն պաշտամունքին հատորդում էին արտասովոր և գրավիչ մի բանաստեղծականություն:

Կաթողիկոսը ներկա էր պատարագին՝ նստած Իր գահի վրա: Արարողության ավարտից առաջ Նա, խոսք առնելով, Իր քարոզի մեջ հայտնեց ժողովրդին, որ եկեղեցում ներկա են բազմաթիվ ֆրանսիացիներ, որոնց հետ Ինքը քիչ առաջ երկար մի տեսակցություն է ունեցել և որոնց անձնապես բարձր է գնահատում, որովհետև նրանք բոլորն էլ մարդու իրավունքի պաշտպանության վսեմ գործին լծված մարդիկ են և զավակները մի ազգի, որ իր պատմության ընթացքում միշտ եղել է վեհանձն և օրինապահ: Վերջում Նա ասաց, որ Ինքը աղոթում է նրանց համար, նրանց ամբողջ ազգի համար:

Հայոց Հայրապետի այս խոսքերը, որ մի

սարկավազ մեր ականջներին շնչալով թարգմանում էր, և որոնք հետագայում երկարորեն մեկնաբանվեցին մեր կողմից, երախտագիտության և հպարտության զգացում ներշնչեցին մեզ բոլորիս:

Ամփոփելով իր տպավորությունները, հողվածագիրը վերջում եզրակացնում է. «Հայոց կաթողիկոսի ընդունելությունը և ս. Էջմիածնում մատուցված պատարագը մեզ համար եղան հոգեկան ապրումի բացառիկ պահեր, որոնք պետք է իսթան հանդիսանան մեր ընկերակցությանը և մեր միջազգային ակումբին՝ մշակելու հետագա ճանապարհորդությունների այնպիսի ծրագիր, որ հնարավորություն տար մեզ շփումներ ունենալու ոչ միայն իրավաբանության ու տնտեսագիտության բնագավառի օտար պաշտոնակիցների հետ, այլև այցելած երկրի ամեն մի անձնավորության, որի հետ մեր հանդիպումը կարող է հարստացնել մեզ»:

